ՍԱՍՈՒՆ ՍԱՐԻԲԵԿՅԱՆ
ԱՐՄԻՆԵ ՆԱՆՅԱՆ

ՀՀ ՔԱՂԱՔՆԵՐԻ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԿՅԱՆՔԻ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՈՐԱԿԸ

Կյանքի որակի քաղաքական բաղադրիչները կոչված են որոշելու դեմոկրատական համակարգի գործոնները, ֆունկցիաները, որոնք կազմակերպում են հասարակության բոլոր անհատներին՝ հասնելու որոշակի ընդհանուր և հասարակական նպատակների [9, էջ 58]: Քաղաքական բաղադրիչներից են կախված պայմանները, որոնք անմիջական կամ միջնորդված կերպով ազդում են մարդու, հասարակության հիմնական պահանջմունքների բավարարման վրա: Իսկ եթե հաշվի առնենք, որ ՀՀ-ն նորանկախ երկիր է և առաջնահերթ խնդիրների շարքին են դասվում քաղաքական ինստիտուտների կայացման, մարդկանց քաղաքական ազատությունների, իշխանությունների գործունեության արդյունավետության բարձրացման խնդիրները, ուստի հատուկ կարևորություն է ձեռք բերում ՀՀ քաղաքների բնակչության կյանքի քաղաքական որակի վերլուծությունը:

Չնայած կյանքի որակի ձևավորման վրա քաղաքական գործոնի ազդեցությունն ակնհայտ է, այնուամենայնիվ, կյանքի որակին նվիրված շատ աշխատություններում քաղաքական բաղադրիչները որպես գործոնների առանձին խումբ չեն առանձնացվում [10, 11, 7, 2]: Սակայն, սրանց կողքին կան համակարգեր, որտեղ մեծ դեր է հատկացվում կյանքի որակի ձևավորման գործում՝ քաղաքական գործոններին: Այդպիսին է, օրինակ՝ կյանքի որակի շվեդական մոդելը [8], որտեղ առաջին պլան են մղվում մարդու քաղաքական հնարավորությունները: Մեկ այլ օրինակ է՝ Բ.Չ. Լյուի համակարգը [9], որտեղ ոչ միայն առանձնացվում են առանձին քաղաքական բաղադրիչներ, այլ քաղաքական գործոնների՝ «բնակչության անհատական ակտիվությունն» ու «տեղական իշխանությունների գործունեությունը» խմբերը ներկայացվում են ենթախմբերով և առանձին ցուցանիշներով: Այստեղ նկատելի է կյանքի որակի

վրա քաղաքական գործոնների ազդեցությունը հնարավորինս մանրամասն արտահայտելու անհրաժեշտության գիտակցումը, սակայն միևնույն ժամանակ նկատելի են նաև ԱՄՆ-ի քաղաքական ոլորտի տարածքային կազմակերպման առանձնահատկությունները, որը պետք է հաշվի առնել այլ երկրների քաղաքների բնակչության կյանքի որակի գնահատման ժամանակ այս համակարգը կիրառելու դեպքում:

Հիմք ընդունելով այլ երկրների փորձը, հաշվի առնելով ՀՀ առանձնահատկությունները և նպատակ ունենալով ցույց տալ Ն. Ֆ. Ռեյմերսի մարդու պահանջմունքների տիպոլոգիայում[1] [6] առկա «կամքի ազատ արտահայտման», «հասարակությանը պիտանելիության զգացման», «տարբեր հիերարխիկ մակարդակի սոցիալական խմբեր ստեղծելու, դրանով իսկ ինքն իրեն պետք լինելու», «մի շարք պահանջմունքների բավարարման համար անհրաժեշտ սոցիալական ֆոնի ստեղծման», «վաղվա օրվա նկատմամբ երաշխիքների և վստահության» պահանջմունքների բավարարման հնարավորությունները, ինչպես նաև ՀՀ Սահմանադրության մեջ ամրագրված ՀՀ քաղաքացիների անմիջականորեն կամ կամքի ազատ արտահայտությամբ ընտրված իրենց ներկայացուցիչների միջոցով պետական կառավարմանը մասնակցելու, օրենքով պաշտպանվածության, անձեռնմխելիության իրավունքների իրականացումը և դրանց իրականացման գործում պետության օժանդակությունը, ՀՀ քաղաքների բնակչության կյանքի որակի քաղաքական կողմը գնահատելու համար՝ կիրառենք ցուցանիշների հետևյալ համակարգը.

1. Բնակչության մասնակցությունը քաղաքապետի ընտրություններին,
2. Քաղաքապետի թեկնածուների թիվը,
3. Ավագանու անդամների թիվը 1000 բնակչի հաշվով,
4. Տեղական ինքնակառավարման համակարգում զբաղվածների թիվը 1000 բնակչի հաշվով,
5. Համայնքային ինքնակառավարման մարմինների պահպանման ծախսերը 1 բնակչի հաշվով,
6. Համայնքային բյուջեի եկամուտները 1 բնակչի հաշվով,
7. Համայնքային բյուջեում պետական բյուջեից ստացված դոտացիայի բաժինը,

---

1. Այս տիպոլոգիական մարդու նկատմամբ համակարգային մոտեցման ամենահաջողված փորձերից է:

8. Համայնքային բյուջեի ծախսերը 1 բնակչի հաշվով.

9. Ոստիկանների թիվը 1000 բնակչի հաշվով.

10. Հանցագործությունների բացահայտման մակարդակը:

Ընդհանրապես բարդ խնդիր է համարվում կյանքի որակի ցուցանիշներն ինտեգրացնող հիմնարար մեթոդիկայի մշակումը:

Նպատակ ունենալով հաշվել ՀՀ քաղաքների բնակչության կյանքի քաղաքական որակի գործակիցները՝ հիմք ընդունենք միջին քառակուսային շեղման մեթոդը[2] [3, 4, 5], կատարելով որոշ մոդիֆիկացիա[3]:

Նշանակելով k -րդ քաղաքի i -րդ ցուցանիշը X_{ki} -ով՝ որոշենք նրանց միջին թվաբանականը՝

$$X'_{միջ} = \frac{X_{1i} + X_{2i} + \cdots + X_{mi}}{m},$$

որտեղ m -ը՝ քաղաքների թիվն է:

Այնուհետև որոշենք i -րդ ցուցանիշի դիսպերսիան (ցրումը).

$$\sigma = \sqrt{\frac{(X_{1i} - X'_{միջ})^2 + (X_{2i} - X'_{միջ})^2 + \cdots + (X_{mi} - X'_{միջ})^2}{m}} = \sqrt{\frac{\sum_{k=1}^{m} (X_{ki} - X'_{միջ})^2}{m}} :$$

k -րդ քաղաքի i -րդ ցուցանիշի համար հարաբերական ցուցանիշը որոշենք այսպես՝

$$Y_{ki} = \pm \frac{X_{ki}}{\sigma}$$

որտեղ + նշանը վերաբերում է դրական ցուցանիշներին, – նշանը՝ բացասական արժեք ունեցող՝ «համայնքային բյուջեում պետական բյուջեից ստացված դոտացիայի բաժինը» ցուցանիշին: Արդյունքում՝ k -րդ քաղաքի կյանքի քաղաքական որակի հարաբերական գործակիցը կստացվի հետևյալ

կերպ. $Q_k = \frac{Y_{k1} + Y_{k2} + \cdots + Y_{kn}}{n} = \frac{\sum_{i=1}^{n} Y_{ki}}{n}$,

որտեղ n -ը՝ ցուցանիշների թիվն է:

ՀՀ քաղաքների բնակչության կյանքի քաղաքական որակը գնահատե-

---

2. Այսպիսի կոռեկտ մեթոդով առաջին անգամ է կատարվում կյանքի որակի գնահատական:

3. Խոսքը վերաբերում է դրական և բացասական ինդիկատորների ինտեգրացմանը:

լու համար բազային տվյալները վերցվել են 1998 և 1999թթ. պաշտոնական վիճակագրությունից, որը, ցավոք, միշտ չէ և բոլոր քաղաքների համար չէ, որ տալիս է սպառիչ պատկեր: Պակասող տվյալները լրացվել են փորձագիտական եղանակով ստացված տվյալներով: Արդյունքում, ՀՀ քաղաքների բնակչության կյանքի որակի գնահատման ժամանակ ստացվել է նկարում արտահայտված պատկերը:

Ամենաբարձր գործակիցն ունի Ծաղկաձոր քաղաքը (4.87): Երկրորդ տեղում է Դաստակերտը: Սա հիմնականում պայմանավորված է տեղական ինքնակառավարման համակարգում զբաղվածության բարձր մակարդակով, բնակչության քաղաքական ակտիվության բարձր մակարդակով: Բացի վերոհիշյալ քաղաքներից, կյանքի քաղաքական որակի բարձր մակարդակ ունեն նաև Նոյեմբերյան, Մեղրի, Ագարակ, Քաջարան, Մեծամոր քաղաքները, որտեղ հարաբերական գործակիցը 4.00-ից բարձր է: Իսկ ընդհանրապես, 19 քաղաքներում կյանքի որակի քաղաքական կողմն ունի միջինից (3.50) բարձր մակարդակ, 29 քաղաքներում այն միջինից ցածր է: Բնակչության քաղաքական կյանքի որակի ամենացածր մակարդակն ունի Բյուրեղավան քաղաքը (2.83): Երևան քաղաքը, Սիսիան, Վանաձոր, Գյումրի քաղաքների հետ միասին պատկանում է կյանքի քաղաքական որակի ամենացածր մակարդակ ունեցող քաղաքների թվին, սա պայմանավորված է հիմնականում հանցագործությունների բացահայտման համեմատաբար ցածր մակարդակով, բնակչության քաղաքական ակտիվության ցածր մակարդակով, տեղական ինքնակառավարման համակարգում զբաղվածության և համայնքային ինքնակառավարման ֆինանսական ապահովվածության համեմատաբար ցածր մակարդակով:

Ինչ վերաբերում է ըստ մարզերի քաղաքային բնակչության կյանքի քաղաքական որակին, ապա միայն Վայոց Ձորի մարզն է, որտեղ բոլոր քաղաքներում ինտեգրալ ցուցանիշները ունեն միջինից բարձր մակարդակ: Սյունիքի մարզում 3 քաղաքներ (Սիսիան, Կապան, Գորիս) ունեն միջինից ցածր մակարդակ, մյուս քաղաքներն ունեն միջինից բարձր մակարդակ: Գեղարքունիքի մարզում ևս քաղաքների հիմնական մասը (թվով 3) ունի միջինից բարձր մակարդակ և միայն Վարդենիսն ու Գավառն ունեն միջինից ցածր մակարդակ: Մնացած բոլոր մարզերի քաղաքների հիմնական մասը ունի կյանքի քաղաքական որակի միջինից ցածր ցուցանիշ: Արարատի և Տավուշի

մարզերից յուրաքանչյուրում 3-ական քաղաքներ ունեն միջինից ցածր մակարդակ, 1-ական քաղաքներ՝ (համապատասխանաբար Վեդին և Նոյեմբերյանը) միջինից բարձր մակարդակ: 3 մարզերում՝ Արագածոտնում, Արմավիրում և Շիրակում 2-ական քաղաք ունի միջինից ցածր մակարդակ և համապատասխանաբար Թալինը, Մեծամորը և Մարալիկը ունեն միջինից բարձր մակարդակ: Կոտայքի մարզի 3 քաղաքները՝ Ծաղկածորը, Աբովյանն ու Եղվարդը՝ ունեն միջինից բարձր, մնացած 4 քաղաքները՝ միջինից ցածր մակարդակ: Ամենավատ պատկերը Լոռվա մարզում է, որտեղ 7 քաղաքներում կյանքի քաղաքական որակն ունի միջինից ցածր, և միայն Շամլուղ քաղաքում՝ միջինից բարձր մակարդակ:

Այս ամենը ենթադրում է այն մասին, որ ՀՀ քաղաքների համար ընդհանրապես, և մասնավորապես՝ Լոռվա, Արարատի, Տավուշի, Կոտայքի, Շիրակի, Արմավիրի և Արագածոտնի մարզերում տեղական ինքնակառավարման մարմինների գործունեության արդյունավետության բարձրացման, քաղաքական գործընթացներում բնակչության մասնակցությանը տեղական իշխանությունների կողմից աջակցության, տեղական բյուջեների համալրման արդյունավետության բարձրացման և ծախսերի պլանավորման սկզբունքային փոփոխությունների, ֆիսկալ քաղաքականության սկզբունքների և գերակայությունների փոփոխության անհրաժեշտություն կա:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. ՀՀ Սահմանադրությունը, Եր., 1995
2. Всемирный банк. На пороге 21 века. Доклад о мировом развитии 1999/2000 М., "Весь мир" 2000.
3. Математика в социологии. Моделирование и обработка информации. Ред. колл. А. Агамбекян, Х. Блейлок, Ф.Бородкин и др. М., "Мир" 1977.
4. Математические методы анализа и интерпретация социологических данных. Отв. Ред. В. Г. Андреенков Ю.Н. Толстова. М., "Наука" 1989.
5. Осипов Г.В., Москвичев Л.Н., Кабыща А.В. и др. Социология: основы общей теори. М., "Аспект пресс" 1998.
6. Реймерс Н. Ф. Надежды на выживание человечества: концептуальная экология. М., 1992.
7. Boyer R., Savageau D. Places rated almanac. Your guide to finding best places to live in America. N.Y., 1989.
8. Erikson R., «Descriptions of Inequality: The Swedish Approach to Welfare Research», in The Quality of Life. Clarendon Press. Oxford, 1993.
9. Liu Ben-Chieh, Quality of life indicators in US metropolitan areas. N.Y., 1976.
10. Papageorgiou J., Quality of life indicators. «Intern. J. of Environment Studies», 1976, v. 9, N 3.
11. Thomas G.S., The rating guide to life in Americas small cities. Buffalo, 1990.